


ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ, Ագուլիսի բարբառի մասունքներ (հեղինակային հրատարակություն), Ե., 2011, 616 էջ, նկ.:



Գերմանացի հայտնի արևելագետ-հայագետ Յոհան Յոախիմ Շրյոդերի՝ հայերենին նվիրված գիտական ուսումնասիրությունում (Գանձ Արամեան լեզուի, Ամստերդամ, 1711 թ.) Ագուլիսի բարբառով առաջին նյութի հրապարակումից 300 տարի անց լույս է տեսել անվանի հայագետ-նախիջնանագետ Ա. Այվազյանի «Ագուլիսի բարբառի մասունքներ» աշխատասիրությունը: Ավելի վաղ հրատարակվել է Մարի Զաքարյանի՝ շուրջ 5000 բառից բաղկացած «Ագուլիսի բարբառի բառարանը» (2008 թ.): Այս եզակի հրատարակությունները ուշագրավ են ոչ միայն հայ բարբառագիտությանը ու հոգեվոր մշակույթի պատմությանը՝ զբաղվող հայագետների, այլև ընթերցողների լայն շրջանի, հատկապես ագուլեցիների, զոկերի հարատևող սերունդների համար: Մանավանդ որ Ս. Մարգարյանի «Ագուլեցոց բարբառը» (Մոսկվա, 1883 թ.), Հր. Աճառյանի «Քննություն Ագուլիսի բարբառի» (Եր., 1935) աշխատություններից և Ե. Լալայանի

հրատարակած ազգագրական նյութերից (1905 թ.) հետո Ագուլիսի բարբառի գրավոր և գրական ստեղծագործություններն ու բառապաշարը Ա. Այվազյանի աշխատանքի շնորհիվ այսպիսի ծավալով առաջին անգամ են ներկայացվում հայագիտությանը:

Աշխատության «Կանխաբանություն» բաժնում Ա. Այվազյանը հատուկ անդրադառնում է «Գողթան», «Ագուլիս» պատմաաշխարհագրական անուններին, «զոկ» էթնոանվան գիտական բացատրությանը, բարբառի ուսումնասիրության պատմության և համապատասխան երևույթների մշակութաբանական վերլուծությանը: Գողթանին վերաբերող բազմաբնույթ խորհրդածությունները եզրափակվում են Լեոյի՝ այդ գավառին տված հիանալի բանաստեղծական-գիտական բնութագրմամբ:

Գողթան գավառի էթնիկ ու հիմնական կորիզը կազմող բնակավայրերից գլխավորը նրա սիրտը համարվող նշանավոր Ագուլիս գյուղաքաղաքն էր: Այդտեղ ու մերձակա բնակավայրերում դարերով ապրած-արարած հայ բնակչությունը հայտնի է «զոկ» էթնոանվամբ, որի խոսակցական լեզուն Ագուլիսի, զոկական կամ զոկերեն բարբառն է¹:

Ա. Այվազյանի գիտական որոնումները ցույց են տվել, որ սկսած XVIII դ. վերջերից՝ պատմական աղբյուրներում, մասնավորապես ճամփորդական և ազգագրական նյութերում, հանդիպում են հիշատակություններ՝ կապված «զոկ» էթնոանվան ու բարբառի հետ:

Բնչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, Ագուլիսի բարբառը կամ զոկերենը ունեցել է զուտ տեղական, սահմանափակ կիրառություն. ընտանիքի, բնակավայրի, գավառի սահմաններից դուրս ինչպես անցյալում, այնպես էլ այսօր զոկերը հաղորդակցվում ու գրում են ընդհանրական, գրական հայերենով: Մինչև XIX-XX դդ. այդ բարբառով ոչ միայն վիմական արձանագրություններ, այլև գրավոր խոսքի նմուշներ չեն ստեղծվել: Հետազոտողներին

¹ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 3, Ե., 1977, էջ 699:

հայտնի միակ բացառությունը Օ. Շրյոդերի ուսումնասիրության մեջ բերված փոքրածավալ «Զրույցն» է:

Ագուլիսի բարբառի նախորդ ուսումնասիրողների (Ս. Մարգսյան, Հր. Աճառյան, Մ. Զաքարյան և ուրիշներ) համեմատությամբ՝ աշխատասիրության հեղինակը կատարել է նոր քայլ՝ կազմելով բարբառի և ենթաբարբառի (Յդնայի) 1750-ից ավելի առավել յուրահատուկ ու դժվարամատչելի բառերի ու բառակապակցությունների բառարան, որոնց մի մասը բառարանագրվում է առաջին անգամ:

Առանձին գեղարվեստական, ճանաչողական արժեք է աշխատության «Պայմանավոր կամ ծածկալեզվային բառեր և հասկացություններ» բաժինը՝ լրացված հեղինակի բացատրական բառարանով:

Հատկապես ուշագրավ են հեղինակի հավաքչական աշխատանքի շնորհիվ բազմապատկված, նախկինում հրապարակվածների (Ս. Մարգսյան, Ե. Լալայան) համեմատությամբ, ժողովրդական բանավոր գրականության հետևյալ նմուշները՝ առածներ, ասացվածքներ, երդումներ, օրհնանքներ, անեծքներ:

Ժողովրդական բանավոր գրականության նմուշներն ընթերցողին որոշակի պատերազմում են տալիս զոկերի, ագուլեցիների բարոյահոգևոր կյանքի, դրա ներքին «կարգավորիչների», զոկերի՝ դարերի ընթացքում մշակված արժեհամակարգի մասին, առանց որոնց, բնականաբար, դժվար կլիներ տվյալ ենթաէթնոսի ոչ միայն յուրահատկության ու անկրկնելի կոլորիտի պահպանումը, այլև գոյատևումը ժամանակի ընթացքում:

Ազգագրական, բանասիրական հետաքրքրություն են ներկայացնում նաև կրճատված անձնանունների, տոհմանունների ու մականունների նմուշները: Հատուկ բաժնով տրված են զոկերի, զոկ երեխաների խաղերը, երգերը, շուտասելուկները, հանելուկներն ու ասացվածքները, որոնք յուրովի պատկերացում են տալիս նրանց հետաքրքրությունների, հավատալիքների, ծեսերի, պատմական անցքերի, «փոքր հայրենիքի» նկատմամբ տածած քնքուշ սիրո մասին: Գրքում, որպես բանավոր գրականության յուրատեսակ նմուշներ, ընդգրկված են նաև անեկդոտներ, այդ թվում՝ «ինքնաանեկդոտներ», հեքիաթներ, պատմվածքներ, իրական եղելություններ: Սրանք ունեն ոչ միայն գեղարվեստական, այլև պատմաազգագրական արժեք:

Արդեն նշվել է, որ Ագուլիսի բարբառով երկար ժամանակ գրավոր գրականություն չի ստեղծվել: Այս առումով բացառություն են XIX-XX դարերը, մասնավորապես Ագուլիսի կործանումից հետո ընկած ժամանակահատվածը: Գողթանի, Ագուլիսի կոտորածը, հայրենիքի կորուստը, զոկերի աշխարհացրիվ լինելը, դրան հաջորդած խոր բարոյահոգեբանական ճգնաժամն ու կորստի մորմոքը պատճառ դարձան, որ Ագուլիսի բարբառով ևս գրվեն այդ թեմաներին նվիրված բանաստեղծություններ, պոեմներ, այլ ստեղծագործություններ: Այս թեմային են նվիրվել նաև Հ. Թումանյանի «Միր հրգեադարձ վաթանը», «Միր վաթանի գուլումը», Չլախից Մարգսի «Հայ գիտի բախտ, հայ գիտի վախտ» և այլ ստեղծագործություններ:

Այդ անմար կարոտը տասնամյակներ անց ևս, արդեն մեր օրերում, ստիպել է մեկ այլ զոկ հեղինակի Ագուլիսի բարբառի փոխադրել Գևորգ Հակոբյանի «Քելե լառ» հանրահայտ երգի խոսքերը՝ իբրև առ այսօր հնչող կարոտի դողանք, իբրև տունդարձի անմոռաց կանչ:

Մի անկրկնելի գեղարվեստական խճանկար-համայնապատկեր է Ս. Զաքարյանի «Դըշտացիք» մեծածավալ պոեմը՝ նվիրված Դեշտին՝ Ներքին Ագուլիսին ու նրա բնակիչներին: Դրանում Դեշտը գեղարվեստական խոսքի պատկերավորությամբ

ներկայացված է իր թաղերով, բնապատմական հուշարձաններով, մարդկանցով՝ անուններով ու մականուններով, զբաղմունքներով ու հետաքրքրություններով, բառ ու բանով: Պոեմն ավարտվում է զոկ կնոջը նվիրված խիստ բնութագրական, գեղեցիկ տողերով ու հայրենակիցների հանդեպ հեղինակի տածած անսահման սիրով, միացող կարոտի խոստովանությամբ:

Հիշատակենք նաև Ագուլիսին նվիրված Ս. Սողոմոնյանի «Ըզուլաց անումը», Ա. Զարգարյանի «Եյզըլացաց թօզա տարին», Ժողովրդական՝ «Աղոթք ըզըլացաց տասներկու սրբերին» և այլ գրական ստեղծագործությունները:

Աշխատության մեջ տեղ են գտել նաև զոկերենով գրված՝ Ռ. Փանյանի «Անգոհունակ կինը», Ա. Զարգարյանի «Ադաթ չի», «Ալմագ կամ կատվին շօհ ա, մկնին մօհ ա», «Ակցըզլի», «Բօյաղչուց հարսանիքը», Ս. Սողոմոնյանի «Ղուլաց տան նամուսը» և այլ հեղինակների դրամատիկական ստեղծագործությունները, որոնք ժամանակին բեմադրվել են Թիֆլիսում, Բաքվում, Զաքաթալայում, Յդնայում: Դրանք շոշափում են բազմաթիվ ավանդական թեմաներ՝ կնոջ դժգոհությունը իր բախտից, հին ու նոր «ադաթների» բախումը, տարիքային, սոցիալական անհավասարության հանգամանքը ամուսնության հարցում, տարբեր խավերի՝ «նամուսի» վերաբերյալ ըմբռնումներն ու պատկերացումները և այլն:

Նշված դրամատիկական գործերը հատկապես արժեքավոր են գրախոսվող աշխատության բովանդակության ու նպատակների տեսանկյունից: Նախ, դրանք հետաքրքիր են լեզվական՝ լեզվամտածողության ու լեզվահոգեբանության կտրվածքով: Ասես նա կենդանի զրույցի է բռնվել իր հեռավոր նախնիների հետ: Պիեսների նյութը վերցված է Ագուլիսի, Յդնայի, գաղթօջախներից՝ Թիֆլիս, Զաքաթալա և այլուր բնակված զոկերի կյանքից. նրանց ծեսերը, բարքերը, ավանդույթները, հավատալիքները, կրոնական ու աշխարհիկ տոները, կենցաղը, տարազը, մինչև անգամ խոհանոցը՝ քաղցրավենիքներով ու կերակրատեսակներով: Գրքի հեղինակը բնութագրում է նաև զոկերին խիստ հատուկ, ծայրահեղության աստիճանի հասնող հյուրասիրության սովորույթը. դրա կազմակերպումը, սեղանի սպասքավորման, թեյի շուրջ զրուցելու («չայ խմելու», «ըխտըլաթ անելու») արարողակարգային մշակույթը: Աշխատության մեջ զետեղված դրամատիկական գործերը, որոնք ընթերցողի ուշադրությանն են հանձնվում առաջին անգամ, արխիվային նյութերի արժեք ունեն:

Հատուկ նշենք գրքում օգտագործված պատմական, ազգագրական նշանակության նկարների (Ա. Զարգարյան, Ե. Ղարիբջանյան, Կ. Հովսեփյան), Լուսիկ Ագուլեցու հավաքածուի, հեղինակի անձնական հավաքածուի ու տարբեր ժամանակներում նրա արած լուսանկարների մասին: Գիտականորեն ուշագրավ են նաև «Հավելված» բաժնի մի շարք փաստաթղթերն ու նամակները: Լուսանկարներից առարձնացնենք երկուսը: Ագուլիսի երաժշտական քառյակի (1890) լուսանկարը: Կպատկերացնեի՝ այդ երաժիշտները, որ իրենց քառյակը տասնամյակներ անց ստեղծվելիք, մեծ հայրենակցի՝ Կոմիտասի անունը կրող աշխարհահռչակ լարային քառյակի նախատիպն է: Եվ Տանակերտ գյուղի դպրոցի «Գողթան» հավակնոտ անունով գրական ընկերության անդամների խմբանկարը (1902): Ամենայն հավանականությամբ, ընկերությունը հիմնել ու ղեկավարել է այդ տարիներին իր ծննդավայրում ուսուցչություն անող, Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, ապագա անվանի մանկագիր Հայրապետ Հայրապետյանը:

Ավելացնենք նաև, որ Ագուլիսի բարբառի, ընդհանրապես Գողթան գավառի հետ կապված նյութական ու հոգևոր արժեքների հավաքման, դրանք գիտականորեն հետազոտելու,

հրատարակելու, լայն զանգվածների ու պատմության սեփականությունը դարձնելու, այդ նյութերի հիման վրա յուրատեսակ թանգարան ստեղծելու խնդիրները միշտ էլ մտահոգել են մասնագետներին ու զոկ մտավորականներին, հատկապես Ագուլիսի կործանումից, առավել ևս Գողթանի իսպառ հայաթափումից հետո:

Այստեղ, առաջին հերթին, հարկ է մատնանշել ճանաչված ազգագրագետ, պատմաբան, Գողթանի ազգագրության մտահոգ հետազոտողներից մեկի՝ Ստեփան Լիսիցյանի (1865-1947) անունը: Նա այս առնչությամբ 1935 թ. գրել է. «Վերջին տարիներս մի ամառ շրջագայել եմ գոկերի-Ագուլիսի գաւառի բոլոր այն գյուղերում, որտեղ լեզուն նման է ագուլեցոց բարբառին, երկու անգամ այցելել եմ Մեղրու շրջանը, որի բնիկներին ես համարում եմ նույնպես Զոկստանի մի յատուկ ճիւղ՝ իր լեզվի առանձնահատկություններով հանդերձ»: Իրոք, Մեղրին և՛ բնությունով, և՛ մարդկանցով ու մշակույթով շատ բանով հիշեցնում է Ագուլիսը, և ինչ-որ իմաստով այն կարելի է համարել պատմության համար փրկված, պահված Ագուլիս: Այս ուղղությամբ կատարված առաջին գործնական քայլերը կապվում են երևանաբնակ Ստեփան Մնացականյանի (1924-1990)՝ «Իգիլյացի Ստեփան, Մրցըկանաց Մելքումօ տղան» անվան հետ:

Զմոռանանք նաև նշել տաղանդավոր նկարչուհի, ազգագրագետ Լուսիկ Ագուլեցի Մամվելյանի ազգանվեր գործունեությունը: Նա իր ամուսնու՝ քանդակագործ Յուրի Մամվելյանի հետ Ագուլիսից բերված, գնված նյութերի հիման վրա Երևանում՝ Մուրացանի փողոցում գտնվող իրենց գողտրիկ առանձնատանը, ստեղծել է Ագուլիսին, Գողթանին նվիրված մի յուրատեսակ, դեռևս ոչ պաշտոնական թանգարան, իսկ վերջերս էլ (2010) հրատարակվել է Լ. Ագուլեցու «Անցյալի մասունքներ» հավաքածուն, շուրջ 500-էջանոց շքեղ, պատկերազարդ գիրք-ալբոմը:

Սակայն այս ուղղությամբ ունեցած ամենամեծ վաստակն ու ձեռքբերումը կապվում է գրախոսվող աշխատասիրության հեղինակի՝ Արզամ Այվազյանի անվան ու գործունեության հետ. նա շուրջ 47 տարի է իր կյանքը (երբեմն էլ վտանգելու գնով) նվիրել է հարազատ Նախիջևանի ու Գողթանի պատմության, մշակույթի համակողմանի գիտական ուսումնասիրությանը. հրատարակել է 200-ից ավելի գիտական հոդված, 32 մենագրություն (հայերեն, ռուսերեն, անգլերեն), պատրաստել հրատարակության սպասող բազմաթիվ աշխատություններ, ստեղծել հետաքրքիր ֆիլմաշար ու մեծարժեք անձնական հավաքածու: Գրախոսվող աշխատության թեմայի առնչությամբ Այվազյանի բազմաթիվ աշխատություններից կցանկանալինք առանձնացնել հատկապես «Գինեւէտ Գողթն. Պատմա-ազգագրական ակնարկ, լուսանկարչական պատկերագիրք» (Ե., 2006), որն արդեն դարձել է հայրենաբնակ ու աշխարհասփյուռ գողթանցիների սեղանի գիրքը:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ս. Գ.

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու